

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ,
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՖԱԴԵՅ ՏԱՃԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ
(ԾՆՆԴՅԱՆ 75 -ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)**

Լրանում է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, հաշվողական տեխնիկայի եւ կառավարման ավտոմատացված համակարգերի բնագավառի խոշոր մասնագետ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանի ծննդյան 75 տարին:



Կես դարից ավելի ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը ակտիվորեն մասնակցում է Հայաստանի գիտական եւ հասարակական-քաղաքական կյանքին:

Սարգսյան - գիտնականին բնորոշ են մտքի պարզությունը, հասունացած հիմնահարցերի նկատմամբ վերլուծական մոտեցումը, որոշումների համարձակությունն ու նորարարությունը, եզրահանգումների կշռադատվածությունը, պահպանողականության եւ դոգմատիզմի մերժումը, նորի, առաջավորի մշտական աջակցումը:

Գիտնականի եւ գիտության կազմակերպչի տաղանդն առավել փայլուն դրսևորվեց 1963-1978 թթ., երբ ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը զխավորում էր երեսանի մաթեմատիկական մեթոդների գիտահետազոտական ինստիտուտը:

նագմավարական ճիշտ ընտրությունը ֆ. Սարգսյանին հնարավորություն ընձեռեց ինստիտուտի աշխատանքները նպատականղելու կարեւորագույն պետական ծրագրերի զինված ուժերի ու ժողովրդական տնտեսության համար հաշվողական տեխնիկայի միջոցների եւ համակարգերի ստեղծմանը: Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունները դարձան փոքր մեքենաների, միջին արտադրողականության էՅՄ-ների եւ ավտոմատացված կառավարման համակարգերի մշակումը:

Բացառիկ է ֆ. Սարգսյանի դերը գիտատեխնիկական այնպիսի նոր ուղղության ձեւավորման գործում, ինչպիսին է ավտոմատացված կառավարման համակարգերի մշակումը: Հայաստանի գիտատեխնիկական ներուժը նրա ջանքերով ներգրավվեց երկրի պաշտպանության համար սկզբունքային նշանակություն ունեցող ամենաբարդ հիմնահարցերի լուծման աշխատանքներում: Սարքավորման եւ նոր օպերացիոն համակարգի ստեղծման այդ ծավալուն ծրագիրը, որն ապահովում էր վերջինիս հուսալիությունն ու բարձր արտադրողականությունը, հիմնված էր ինքնատիպ ճարտարագիտական մոտեցումների եւ առաջավոր ճարտարագիտա-տեխնիկական մտքի նվաճումների վրա:

Ֆ. Սարգսյանի ղեկավարությամբ եւ անձնական մասնակցությամբ մշակվեցին եւ արտադրության մեջ ներդրվեցին «Նաիրի», «Հրազդան», ԵՄ-1030, ՀՀ-1010, ՄՀՀ եւ այլ էՅՄ-ներ: Ինստիտուտը դարձավ միջին արտադրողականության էՅՄ-ների միասնական մոդելների գլխադաս մշակողը:

Ինստիտուտում ձեւավորվեց գիտնականների եւ առաջատար մասնագետների դպրոց, որի հիմնադիրներից մեկը եւ գիտական ղեկավարն իրավամբ համարվում էր ակադեմիկոս ֆ. Սարգսյանը: Նրա աշխատությունները ծանրակշիռ ավանդ են հաշվողական տեխնիկայի եւ ինֆորմատիկայի բնագավառում:

Ակադեմիկոս ֆ. Սարգսյանը խոշոր պետական գործիչ է: Տասներկու տարի լինելով Հայաստանի կառավարության նախագահ, նա մեծապես նպաստել է հանրապետության տնտեսական կառուցվածքի կատարելագործմանը, արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության եւ այլ բնագավառներում նորագույն ճյուղերի ստեղծմանը եւ զարգացմանը, որոնցից ամենակարեւորը այնպիսի բնագավառների բուռն զարգացումն էր, ինչպիսիք են ռադիոէլեկտրոնիկան, ճշգրիտ մեքենաշինությունը եւ սարքաշինությունը, ինչպես նաեւ հանրապետության էկոլոգիական վիճակի կտրուկ բարելավմանն ուղղված լուրջ աշխատանքների իրականացումը:

1993 թ. ֆ. Սարգսյանն ընտրվել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ: Նրա ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ համակարգում մեծ աշխատանք է տարվել Հայաստանում գիտության կազմակերպման, գիտական ներուժի պահպանման եւ զարգացման ուղղությամբ:

Ակադեմիկոս Ֆ. Սարգսյանի նախաձեռնությամբ կանգակերպվել են նպատակաուղղված հետազոտություններ երկրի պաշտպանության, ինֆորմատիկայի, ժամանակակից գիտության այլ կարեւորագույն ուղղություններով: Նրա ղեկավարությամբ ստեղծված ակադեմիական գիտահետազոտական քոմփյուտերային ցանցը հնարավորություն ընձեռեց մուտք գործելու համընդհանուր տեղեկատվական ռեսուրսներ: Իրեն հատուկ եռանդի շնորհիվ նա կարողացավ էապես ընդլայնել ակադեմիայի միջազգային համագործակցությունը:

Ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը ԽՍՀՄ Պետական մրցանակների և Ուկրաինայի պետական մրցանակի դափնեկիր է, արժանացել է կառավարական պարգևների, բազմաթիվ արտասահմանյան և հայրենական ակադեմիաների, միջազգային գիտական և գիտատեխնիկական ընկերությունների անդամ է:

Ֆ Սարգսյանը հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր է եւ այսօր եւս պատվով է կատարում քաղաքացու եւ պետական գործչի իր բարձր պարտքը իր գիտելիքներն ու փորձը ծառայեցնելով անկախ Հայաստանի կայացման գործընթացին:

Երկար տարիներ Ֆ. Սարգսյանը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի եւ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկագրի տեխնիկական գիտությունների սերիայի խմբագրական կոլեգիայի անդամ է:

Տեղեկագրի խմբագրական կոլեգիան եւ բազմաթիվ գործընկերները, շնորհավորելով ականավոր գիտնականին եւ պետական գործչին ծննդյան 75-ամյակի առթիվ, մաղթում են նրան քաջառողջություն, երկար տարիների բեղմնավոր ու հայրենամուտ գործունեություն: